600.0277.31.07.13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2013 թվականի № 277Ն
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի №169Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետը, 3-րդ կետի գ) ենթակետը, 17-րդ հոդվածի 5-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» N169Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգում» (այսուհետև՝ Կարգ), կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Ուժը կորցրած ճանաչել Կարգի 19-րդ և 26-րդ կետերը, 27-րդ կետի 5-րդ ենթակետը, 37-րդ և 38-րդ կետերը, 39-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը, N1 հավելվածի 10-րդ կետը, N2, N3 և N4 հավելվածների 8-րդ կետերը.

2) Կարգի 22-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«22. Հանձնաժողովը Հայտի ստուգման բացասական արդյունքի մասին գրավոր տեղեկացնում է Հայտատուին՝ Հայտն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 3

աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ստուգման բացասական արդյունքի դեպքում Հայտը պահպանվում է Հանձնաժողովում:».

3) Կարգի 24-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«24. Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովն սկսում է Հայտի քննարկման գործընթացը և կայացնում համապատասխան որոշում՝ Հայտն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:».

4) Կարգի 29-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Թույլտվություն տրամադրելու վերաբերյալ դրական որոշում ընդունելուց հետո, Հանձնաժողովը որոշման պատճենը 2 աշխատանքային օրվա ընթացքում փոստով ուղարկում է դիմողին, իսկ եթե դիմողը դրա մասին խնդրել է հայտը ներկայացնելու ժամանակ՝ էլեկտրոնային համակարգի միջոցով 1 աշխատանքային օրվա ընթացքում:».

5) Կարգի 31-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«31. Հայտի մերժման դեպքում, որոշումն ընդունելուց հետո, որոշման պատճենը 2 աշխատանքային օրվա ընթացքում փոստով ուղարկվում է Հայտատուին, իսկ եթե Հայտատուն դրա մասին խնդրել է հայտը ներկայացնելու ժամանակ՝ էլեկտրոնային համակարգի միջոցով 1 աշխատանքային օրվա ընթացքում:».

6) Կարգի 36-րդ կետում «մինչև Թույլտվության գործողության ժամկետի ավարտը» բառերը փոխարինել «Թույլտվության գործողության ժամկետի ավարտից առնվազն 15 աշխատանքային օր առաջ» բառերով.

7) Կարգի 40-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«40. Հանձնաժողովը Թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման կամ երկարաձգման մերժման վերաբերյալ որոշում է ընդունում Հայտը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում և որոշման պատճենը 2 աշխատանքային օրվա ընթացքում փոստով ուղարկում է Հայտատուին, իսկ եթե Հայտատուն դրա մասին խնդրել է հայտը ներկայացնելու ժամանակ՝ էլեկտրոնային համակարգի միջոցով 1 աշխատանքային օրվա ընթացքում:».

8) Կարգի NN1-4 հավելվածներից հանել «Կ.Տ.» տառերը.

9) Կարգի N5 հավելվածը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ. ՆԱՋԱՐՅԱՆ**

ք. Երևան
31 հուլիսի 2013թ.